Հաստատված է

Վարչության 09.11.2023թ. որոշմամբ՝

Ուժի մեջ է մտնում 17.11.2023 թվականից

# AMIO–Արտահանման ֆինանսավորում

## Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող ֆինանսավորման պայմաններն ու սակագները (սեփական ռեսուրսներով)

| 1 | Պայմաններ | Նախաարտահանման ֆինանսավորում | Արտահանման ապահովագրությամբ ֆինանսավորում |
|---|---|---|---|
| 1.1 | Արժույթ | ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, ՌԴ ռուբլի | |
| 1.2 | Տարեկան անվանական տոկոսադրույք | ՀՀ դրամ՝ 16%<br>ԱՄՆ դոլար՝ 12%<br>ԵՎՐՈ՝ 11%<br>ՌԴ ռուբլի՝ պայմանագրային | |
| 1.3 | Ժամկետ | 1-18 ամիս | |
| 1.4 | Արտոնյալ ժամկետ | Առավելագույնը՝ 18 ամիս | |
| 1.5 | Մարման եղանակ | Տոկոսները՝ ամենամսյա,<br>մայր գումարի մարումները՝ ժամկետի վերջում | |
| 1.6 | Գումար | 5,000,000-500,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ<br><br>(Արտահանման պայմանագրի կամ առանձին արտահանման գործարքների արժեքի մինչև 85%, եթե ֆինանսավորումը տրամադրվում է արտահանման պայմանագրի արժույթով,<br>Արտահանման պայմանագրի կամ առանձին արտահանման գործարքների արժեքի մինչև 75%, եթե ֆինանսավորումը տրամադրվում է արտահանման պայմանագրում նշված արժույթից տարբերվող արժույթով) | 5,000,000-500,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ<br><br>(Արտահանման պայմանագրի կամ առանձին արտահանման գործարքների արժեքի 75-95%) |
| 1.7 | Վաղաժամկետ մարման տույժ, տուգանք | Չի կիրառվում | |
| 1.8 | Ֆինանսավորման նպատակ | Արտահանման պայմանագրի կատարման նպատակով շրջանառու միջոցների ձեռքբերում (այդ թվում՝ հումքի, նյութերի ձեռքբերում) և/կամ որոշակի ծախսերի կատարում (փաթեթավորում, արտադրանքը շուկայական տեսքի բերելու, տրանսպորտային, մաքսային և նմանատիպ այլ ծախսերի կատարում) | Արտահանման պայմանագրի շրջանակներում ֆինանսավորման տրամադրում |
| 2 | **Բանկի միջնորդավճար** | | |
| 2.1 | Դիմում-հայտի ուսումնասիրության միջնորդավճար | 10,000 ՀՀ դրամ | |
| 2.2 | Սպասարկման միջնորդավճար | 1% | |

| | | | |
|---|---|---|---|
| 2.3 | Վարկային միջոցների կանխիկացման միջնորդավճար | Չի թույլատրվում | |
| **3** | **Ապահովվածություն** | | |
| 3.1 | Գրավի առարկա | ✓ Արտահանման պայմանագրի գծով դեբիտորական պարտքի նկատմամբ պահանջի իրավունքի գրավադրում կամ Արտահանման պայմանագրի գծով դեբիտորական պարտքի նկատմամբ պահանջի իրավունքի զիջում Բանկին<br>✓ 10% և ավելի բաժնեմաս ունեցող սեփականատերերից որևէ մեկի և/կամ տնօրենի անձնական երաշխավորություն<br>✓ Անհրաժեշտության դեպքում՝ Բանկի կողմից ընդունելի այլ գրավ: | ✓ Հայաստնի Արտահանման Ապահովագրական Գործակալության կողմից տրամադրված ապահովագրական վկայագիր<br>✓ Արտահանման պայմանագրի գծով դեբիտորական պարտքի նկատմամբ պահանջի իրավունքի գրավադրում կամ Արտահանման պայմանագրի գծով դեբիտորական պարտքի նկատմամբ պահանջի իրավունքի զիջում Բանկին<br>✓ 10% և ավելի բաժնեմաս ունեցող սեփականատերերից որևէ մեկի և/կամ տնօրենի անձնական երաշխավորություն |
| **4** | **Ապահովագրություն** | | |
| 4.1 | Արտահանման գործարքի ապահովագրություն | Գործարքն ապահովագրվում է Հայաստանի Արտահանման Ապահովագրական Գործակալության կողմից հետևյալ ռիսկերից.<br><br>✓ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով Վարկառուի սնանկ ճանաչվելը.<br>✓ Վարկառուի հրաժարում վճարում կատարելուց՝ առանց որևէ իրավական հիմքի. | Օտարերկրյա գնորդի կողմից կամ պայմանագրով նրա անունից վճարման պարտավորություն ունեցող բանկի կողմից մատակարարված ապրանքների և/կամ մատուցված ծառայությունների դիմաց վճարում չկատարելու հետևանքով կրած ֆինանսական վնասները: Գործարքն ապահովագրվում է Հայաստանի Արտահանման Ապահովագրական Գործակալության կողմից հետևյալ ռիսկերից.<br>ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ<br>✓ Գնորդի սնանկություն (անվճարունակություն).<br>✓ Գնորդի հրաժարում վճարում կատարելուց՝ առանց որևէ իրավական հիմքի.<br>ՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ<br>✓ Վարչական որոշումներ, իրավական ակտեր, որոնք հանգեցրել են վճարումների փոխանցման կամ արժույթի փոխանակման անհնարինության.<br>✓ Քաղաքական իրադարձություններ՝ պատերազմ, հեղափոխություն և այլն, որոնք հանգեցրել են վճարման անհնարինության կամ սահմանափակումների<br>✓ Բնական աղետներ՝ երկրաշարժ, ջրհեղեղ, փոթորիկ և այլն, որոնք հանգեցրել են վճարման անհնարինության կամ սահմանափակումների:<br>Ապահովագրական ծածկույթ-95% |
| **5** | **Վարկառուի նկատմամբ պահանջներ** | | |
| 5.1 | Վարկառու | ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր (արտադրող և արտահանող) | |
| 5.2 | Վարկառուին ներկայացվող | • Տվյալ ոլորտում առնվազն 1 տարվա գործունեության փորձ.<br>• Դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունների | |

| | | |
|---|---|---|
| | պահանջներ | բացակայություն (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով).<br>• Կայուն դրամական հոսքերի առկայություն.<br>• Նախորդ 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակ` ոչ ավել, քան 30 օր.<br>• Հաշիվների վրա կալանքի բացակայություն. |
| 5.3 | Երաշխավորին ներկայացվող պահանջներ | • Դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունների բացակայություն (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով).<br>• Նախորդ 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակը չպետք է գերազանցի 30 օրը (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով).<br>• Անհատ ձեռնարկատեր վարկառուի պարագայում երաշխավորը անհատ ձեռնարկատիրոջ ընտանիքի անդամ չպետք է հանդիսանա: |
| 5.4 | Լրացուցիչ պայման | Վարկառուի ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքում ստացվող ֆինանսական ցուցանիշները պետք է բավարարեն Բանկի պահանջներին: |
| **6** | **Լրացուցիչ պայմաններ** | |
| 6.1 | **Մինչ 31.10.2023թ. ներառյալ տրամադրված դրամական պարտավորությունների դեպքում`**<br>• Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ` յուրաքանչյուր ուշացված օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով,<br>• Դրամական պարտավորությունը պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարվելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի կատարման օրը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով,<br><br>**01.11.2023 թվականից տրամադրված դրամական պարտավորությունների դեպքում`**<br>Բանկն իրավունք ունի`<br>• Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակել կիրառել Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը:<br>• Կիրառել տույժ` ժամկետանց տոկոսագումարի և ժամկետանց գումարի նկատմամբ 0.13%-ի չափով ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար: | |